Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1831 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N 1
ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆՆ ՈՒՂԵԳՐՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

_____ _____
Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը, հեռախոսահամարը, գտնվելու վայրը

_____ _____
ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

_____ _____
ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

Դիտարկման սկիզբը (ամսաթիվը)՝ __20__թ._____ ավարտը՝____20____թ_____

_____
Մասնագետի անունը/հայրանունը/ազգանունը

_____ _____
Դիտարկվող օբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները (հեռախոսահամարը)

_____ _____
Դիտարկվող օբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը (հեռախոսահամարը)

Դիտարկման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ 20____թ.

Դիտարկման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ _____
_____

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից անձի ֆունկցիոնալության գնահատմանը ուղեգրող մասնագետների կողմից իրականացվող գործընթացի նկատմամբ դիտարկումների իրականացման

Հ/Հ	Հարց	Հղում նորմատիվ ակտին	Այո	Ոչ	Չ/պ	Կշիռ	Ստուգման տեսակը	Մեկնաբանություն
1.	Հիվանդության կամ վնասվածքի հետևանքով օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարման առկայության դեպքում ուղեգրումները իրականացվել են անհրաժեշտ ախտորոշիչ, բուժական և վերականգնողական միջոցառումներ իրականացնելուց հետո, իսկ տևական բուժում պահանջող հիվանդությունների ժամանակ՝ նաև բուժման ընթացքում՝ ոչ վաղ, քան բուժման սկզբից 3 ամիս հետո (բացառությամբ անձի առողջական վիճակի վերականգնման հեռանկարի բացակայություն ունեցող հիվանդությունների դեպքերի)	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման հավելվածի 17-րդ կետ, հավելվածի 9-րդ գլուխ				7	փաստաթղթային	
2.	Անձի առողջական վիճակի վերականգնման հեռանկարի բացակայություն ունեցող հիվանդությունների պարագայում ֆունկցիոնալության գնահատման ուղեգրումները	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման				7	փաստաթղթային	

	իրականացվել է առանց եռամսյա ժամկետի պահպանման	հավելվածի 17-րդ կետ, հավելվածի 9-րդ գլուխ						
3.	Անձի առողջական վիճակի վերականգնման հեռանկարի բացակայություն ունեցող հիվանդությունները ընտրվել են օրենսդրությամբ սահմանված ցանկից	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման հավելվածի 17-րդ կետ, հավելվածի 9-րդ գլուխ				6	փաստաթղթային	
4.	Ուղեգրերը և դրանց կից բժշկական փաստաթղթերը լրացվել են հայերեն լեզվով	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման հավելվածի 19-րդ կետ				6	փաստաթղթային	
5.	Ուղեգրերը և դրանց կից բժշկական փաստաթղերը պարունակել են՝	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման հավելվածի 17-րդ կետ, 19-րդ կետ, Առողջապահության նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի N 72-Ն հրամանի հավելված 1–ի 2-րդ կետ						
1)	փաստաթուղթը տալու օրը, ամիսը, տարեթիվը, հերթական համարը					0,7	փաստաթղթային	
2)	անձի անձնական տվյալները՝ անձի անունը, հայրանունը (առկայության դեպքում), ազգանունը					0,7	փաստաթղթային	
3)	ուղեգրող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության վերաբերյալ					0,7	փաստաթղթային	

	տվյալները (լրիվ անվանում, հարկ վճարողի հաշվառման համար, հասցե)							
4)	ուղեգրող բժշկի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, մասնագիտացումը)					0,7	փաստաթղթային	
5)	անձի բուժման ժամանակահատվածի սկիզբը և վերջը, իսկ տևական բուժում պահանջող հիվանդությունների դեպքում՝ սկիզբը					0,7	փաստաթղթային	
6)	ուղեգրերում նշվել են գնահատվող անձի ախտորոշումը, իրականացված բուժական վերականգնողական միջոցառումների արդյունքները՝ մանրամասն ներկայացնելով բոլոր օրգան-համակարգերի մասին տվյալները, ֆունկցիայի խանգարման տեսակը և աստիճանը					0,7	փաստաթղթային	
7)	փաստաթուղթը տրամադրելու հիմքերը և ուղեգրման նպատակի վերաբերյալ տվյալները					0,6	փաստաթղթային	
8)	փաստաթուղթն ստորագրած պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության դրոշմակնիքը.					0,6	փաստաթղթային	
9)	անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, անձնագրի դեպքում՝ նաև հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու վերաբերյալ տեղեկանքը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սոցիալական քարտը կամ Հայաստանի Հանրապետության					0,6	փաստաթղթային	

	օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված՝ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքը							
6.	Ուղեգրերը հաստատվել են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության փորձաքննության գծով տնօրենի տեղակալի կամ փորձաքննություն իրականացնելու իրավասություն ունեցող անձի, իսկ այդ պաշտոնների բացակայության դեպքում տնօրենի կողմից	Առողջապահության նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի N 72-Ն հրամանի հավելված 1–ի 4-րդ կետ				6	փաստաթղթային	
7.	Ուղեգրման պահին, ըստ առանձին հիվանդության դեպքերի, առկա է եղել անհրաժեշտ տեղեկատվությունը **Նշում 1***	Առողջապահության նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի N 72-Ն հրամանի հավելված 1–ի 6-րդ կետ				6	փաստաթղթային	
8.	Ուղեգրերը ձևավորվել («Արմեդ» էլեկտրոնային առողջապահության համակարգում տվյալները հավաքագրվել) են անձի բուժող բժշկի կողմից	Առողջապահության նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի N 72-Ն հրամանի հավելված 1–ի 7-րդ և 9-րդ կետեր				6	փաստաթղթային	

Ծանոթություններ*

Նշում1*

Ուղեգրման պահին պարտադիր է հետևյալ տեղեկությունների առկայությունը.

1) շնչառական օրգանների հիվանդությունների դեպքում՝ համապատասխան մասնագիտական եզրակացությունը, թոքերի ռենտգեն հետազոտության և շնչաչափության (սպիրոմետրիա) արդյունքները,

2) արյան շրջանառության համակարգի հիվանդությունների դեպքում՝ սրտաբանի մասնագիտական եզրակացությունը, էլեկտրասրտագրության, Էխոկարդիոգրաֆիա դուպլեքս հետազոտության, համապատասխան լաբորատոր հետազոտությունների, ցուցումների դեպքում՝ նաև տրեդմիլ թեստի, էլեկտրասրտագրություն հոլտեր մոնիտորինգի, սրտի և թոքերի ռենտգեն հետազոտության արդյունքները,

3) աչքի և նրա հավելյալ ապարատի հիվանդությունների դեպքում՝ ակնաբույժի եզրակացությունը, վիզիոմետրիայի (տեսողության սրության որոշում), օֆթալմոսկոպիայի, ցուցման դեպքում նաև պերիմետրիայի արդյունքները, ակնահատակի լուսանկարը,

4) ականջի և պտկաձև ելունի հիվանդությունների դեպքում՝ քիթ-կոկորդ-ականջաբանի եզրակացությունը հիվանդության և լսողական սարքի արդյունավետության վերաբերյալ, տոնալ, օբյեկտիվ, խոսքային աուդիոմետրիայի արդյունքները,

5) ներզատական համակարգի հիվանդությունների, սննդային և նյութափոխանակության խանգարումների դեպքում՝ ներզատաբանի եզրակացությունը, ուլտրաձայնային հետազոտության և անհրաժեշտ լաբորատոր հետազոտությունների արդյունքները, ցուցման դեպքում նաև ակնահատակի լուսանկարը, ստորին վերջույթների անոթների հեմոդինամիկայի գերձայնային դուպլեքս հետազոտության և էլեկտրանեյրոմիոգրաֆիայի արդյունքները,

6) մարսողական օրգանների հիվանդությունների դեպքում՝ համապատասխան մասնագիտական եզրակացությունը, էնդոսկոպիկ և լաբորատոր-գործիքային հետազոտությունների արդյունքները,

7) նյարդային համակարգի հիվանդությունների դեպքում՝ նյարդաբանի մասնագիտական եզրակացությունը, ցուցման դեպքում՝ հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովի մասնագիտական եզրակացությունը, ակնահատակի զննման, գանգի և ողնաշարի ռենտգենոգրաֆիայի, էլեկտրանեյրոմիոգրաֆիայի, էլեկտրոէնցեֆալոգրաֆիայի, գլխուղեղի ներգանգային և արտագանգային անոթների գերձայնային դուպլեքս հետազոտության, համակարգչային տոմոգրաֆիայի կամ միջուկամագնիսային-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտության արդյունքները,

8) ոսկրամկանային համակարգի հիվանդությունների դեպքում՝ վնասվածքաբան-օրթոպեդի եզրակացությունը, ռենտգեն հետազոտության, անտրոպոմետրիկ հետազոտության (ծայրանդամների երկարություն, հիպոտրոֆիաների չափ, հոդերի ծալման անկյուններ (կոնտրակտուրաների աստիճան)) արդյունքները,

9) շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդությունների դեպքում՝ համապատասխան մասնագիտական եզրակացությունը, անհրաժեշտ լաբորատոր հետազոտությունների, ցուցման դեպքում՝ հոդերի ռենտգեն հետազոտությունների արդյունքները,

10) արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդությունների դեպքում՝ արյունաբանի եզրակացությունը, արյան հետազոտությունների (ցուցման դեպքում՝ լակտատ դեհիդրոգենազա, c-ռեակտիվ սպիտակուց, արյան իմունոգլոբուլիններ,

կրեատինին, կծիկային ֆիլտրացիայի արագություն), ոսկրածուծի ասպիրատի հետազոտության, ուլտրաձայնային հետազոտության արդյունքները,

11) հոգեկան խանգարումների դեպքում՝ հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովի մասնագիտական եզրակացությունը, ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքը սրացումների և բուժման վերաբերյալ,

12) մաշկային և ենթամաշկային բջջանքի հիվանդությունների դեպքում՝ մաշկաբանի եզրակացությունը, լաբորատոր հետազոտությունների արդյունքները, ցուցման դեպքում՝ դերմատոսկոպիա,

13) միզասեռական համակարգի հիվանդությունների դեպքում՝ ուրոլոգի կամ գինեկոլոգի եզրակացությունը, անհրաժեշտ լաբորատոր-գործիքային հետազոտությունների արդյունքները:

Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. **Կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշում.**
2. **Առողջապահության նախարարի 2022 թ. հոկտեմբերի 25-ի «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից անձին ֆունկցիոնալության գնահատման ուղեգրելու կարգը և ուղեգրի ձևը հաստատելու մասին» N 72 հրաման:**

Տեսչական մարմնի ծառայող _____ (ստորագրությունը)

Ուղեգրող մասնագետ _____ (ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ